



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3168

6 - 1922

Հ. Ս. Խ. Հ.

Հայկական Հրատեսչական Գրական-Ֆադարական բաժին

Գրականությունը բոլոր յերկրներին միացեալ.

9(47.925):323.2

4-33

83

ԱՐՏ. ԿԱՐԻՆՅԱՆ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
ՅԵՎ
ՆՐԱ ԴՐԴԱՊԱՏՃԱՌՆԵՐԸ

ԳԻՆՆ Ե՛ 3 ՄԻԼ. Հ. Խ. ԴՐ.

2012

767

ՅԵՐԵՎԱՆ

Զինվորական Տպարան
1922 թ., 29 նոյմբ.

22509

9(47-925):323.2

4-33

W

Հրատարակվում է Հայաստանի խորհրդայնաց-
ման 2-րդ արեղարձի առթիվ:

Կովկասյան հանրապետություններից վաղ մեկը
չի տեսել այնքան սուր քաղաքացիական պատերազմ,
ինչպես այդ յեղել և Հայաստանում:

1918—19-ին Կովկասյան քաղաքական գործիչ-
ներից շատերն այն համոզումը ունեին, թե Հայաս-
տանը կընդունի սովետական վարչաձևը առանց վորե
վե ընդդիմադրության, և կլինի ամենախաղաղ խորհր-
դային վայրերից մեկը: Իսկ հայ նացիոնալ-պատրիո-
տներից նրանք, վորոնք ապրում էին Ռուսիայում,
նույնիսկ «հավատացնում» էին, վոր բուրժուական
Հայաստանի վարիչները սպասում են միայն Ռասսո-
վի անկմանը:.

Հետագա զեպքերը յեկան ապացուցելու, վոր
բոլոր այդ նախադուշակությունները և սպասումները
ախալ են հիմնովին:

Ռասսովի անկումից և Կենտրոնի սպարտություն-
ներից հետո ընկնում և նաև նավթարդյունաբերական
Բազուն:

Խորհրդային ամրակուռ իշխանությունը հաստատ-
վում և համայն Ազրբեյջանում: Կարմիր Բանակի

1006
2854

4 2424-55



2004

ձեռքն են անցնում վողջ հովիտսի կարևորագույն կե-
տերը:

Իսկ Հայաստանը, չնայած այդ բոլորին՝ մնում է-
լուս: Դեռ ավելին էս:

Հայաստանի բանվոր-գյուղացիական լայնա-
գույն տարրերը ապստամբության դրոշ են քարձ-
բացնում հանուն սովետական հանրապետության, և
յեղբայրական հրավեր են ուղղում Կարմիր Բանակին:
Կառավարությունը, դաշնակցական պետությունը,
միացած հայ մենչիկևների և սոցիալ-հեղափոխական-
ների հետ, ճնշում է այդ ապստամբությունը և կռիվ
է հայտարարում ժողովրդական մասսաներին:

Հայաստանը դառնում է ամենասուր քաղաքա-
ցիական բաղխումների թատերաբեմ, դառնում է Կով-
կասյան հակահեղափոխության առաջապահ գունդերից
մեկը:

Սոցիալոգիական հետաքրքրական մի տեսլված
է դա, անշուշտ: Ապագա պատմությունը միայն կա-
րող է պարզիլ այդ յերևույթի բոլոր դարտուղի յե-
լենջները, և մեկնել նրա հիմնական պատճառները:

Այսօր մենք կարող ենք միայն արձանագրել
փաստը, և կանգնել պատճառներից մի քանիսի վրա:
Գուցես այդ էլ կունենա իր արժեքը և հնարավորու-
թյուն կտա հետագա տեսաբաններին բնորոշել ավելի
բաղմակողմանի կերպով մեր նորագույն պատմու-
թյան ամենացայտուն եջերից մեկը...

* * *

Քաղաքացիական պատերազմը Հայաստանում
սկսվում է, ինչպես հայտնի է, մայիսյան ապստամ-
բությունից, 1920 թվին: Ինչպես էլ չգնահատենք այդ

ապստամբության վարիչների կոնկրետ քաղաքակա-
նությունը և գործելակերպը, այնուամենայնիվ մենք
ասիլոված ենք արձանագրել, վոր այդ ապստամբու-
թյունը վող թե մի քանի «չար», և «միակողմանի»
կոմմունիստների քմահաճույքի արդյունք էր, այլ հայ
աշխատավորության տարերային մի հոսանք, բնաղա-
կան մի ճիգ՝ ուղղված դաշնակցական կառավարու-
թյան դեմ: Հանկարծակի, սուսնց վորև է ծրագրի և
վորոշ պատրաստության մայիսյան ապստամբու-
թյունը ծավալվում է յերկրում, և շարժում հայ աշխա-
տավորներին յերկարատև քնից:

Հայ մեծամասնականների մեղքը վող թե նրա-
նումն էր, վոր նրանք կանգնել են շարժման գլու-
խը: Միանգամայն հակառակը: Փաստերը, օրհանառես-
ների և մասնակիցների ցուցումներն ու յիշողություննե-
րը ասում են, վոր ժողովրդական շարժման տարերքն
այնքան անսկնկալ է յեղել, վոր շմեցրել է նույնիսկ
մեծամասնականներին: Ապստամբության օրերին բա-
ցակայել է վորևս ղեկավարություն: Մասսաները
պտտել են և շարժվել ինքնարերարար: Կոմմունիս-
տական կուսակցությունը անսպասելի դեպքերից
շճած չի կարողացել ղեկավարել շարժումը, տալ
մասսաներին հասկանալի լողուններ և կանգ-
նել հեղափոխության գլխին: Ենորհիվ այդ անորոշ
անվճռական քաղաքականության հայ հակահեղափո-
խությունը ուշքի է յեկել, հավաքել է իմի իր
ցրված ուժերը և ապա վճռական հարվածով խեղդել
հեղափոխությունը...

Սակայն այդ պարտությունը հեղափոխական
շարժումը ընդհատվում է լի ժամանակավոր կերպով:

Հետագայում, յիրը դաշնակցական կառավարութիւնը յուր ավանտյուրիստական պատերազմի շնորհիվ պարտւում եւ և կորցնում ընթացքը՝ հայ մասսաները նորից վտարի յեն յեւնում... Այս անգամ ապստամբութիւնը սկսւում եւ Ղազարում, Դիլիջանի և Քարվանսարայի գյուղացիական շրջաններում: Այսպես եւ կազմակերպւում եւ առաջին խորհրդային կառավարութիւնը, վոր կոչւում եւ «Հայաստանի Ռազմա-Հեղափոխական կոմիտե»: Այս անգամ գյուղացիական հեղափոխական շարժումը լինում եւ արեւմտ-ուստի, վոր հին կառավարութիւնը միանգամայն կորցնում եւ իր գլուխը և կանխահա վտանգի առաջն օտնելու համար շտապում եւ Յերևանում գտնվող խորհրդային Ռեւոլյուցիոն կերպարացուցիչ Լեզրանի մտ:

Բանվորա-գյուղացիական հեղափոխութեան հետագա շրջանները ծանոթ են մեզ:

Աստիճաբար հպատակվելով նոր խորհրդային կառավարութեան, դաշնակցութիւնը խլորդի նման զատրաստում եւ Յերևանում և Յերևանի շուրջը իր ցրիվ շարքերը, հավաքում եւ իր մառդերիստական խմբերը և դավաճանական միջոցով դրավում եւ իշխանութիւնը:

Քաղաքացիական կռիւ այս յերրորդ շրջանը լինում եւ ավելի անողոր և սուր: Ինչպես ամենուրեք, այստեղ եւ հակահեղափոխութիւնը ամենադաժան միջոցներ եւ գործադրում «բալչևիկական հիվանդութիւնը» արմատախիլ անելու համար: Սպանվում եւ կոտորվում են հարյուրավոր անմեղ բանվորներ և յերխասարգներ:

Անինայորեն կոտորվում են մարդիկ, վոր

բոնց ամբողջ մեղքը կայանում եր նրանում, վոր նրանք ծառայել էյին խորհրդային հիմնարկութեան ների մեջ...

Ինչի վրա յեր հույս դնում վրացյանի հակահեղափոխական կարիները: Միջազգային իմպերիալիստների ողորթյան թե՛ խորհրդային զորաբանակի քայքայման վրա... Ամենից հավանականը այն եւ, վոր նա յերկու կողմից եւ սպասում եր ողնութեան: Յեւ այնքան համոզված եր դրանում, վոր անհնարին եր համարում վրեկ համաձայնութիւն կնքել խորհրդային իշխանութեան հետ: Հայտնի եւ, վոր Թիֆլիսից, հայ մեծամասնականների առաջարկութեամբ Կովկասյան զորաբանակի հեղափոխական խորհրդի նախագահ՝ ընկ. Որժոնիկիձեն առաջարկում եւ վրացյանին զենքերը վար դնել և վերջ տալ յեղբայրասպան պատերազմին: Այդ միեւնույն նպատակով Թիֆլիսից Յերևան և ուղարկվում Հովհաննես Թումանյանը:

Ամեն ինչ ապարդյուն եւ անցնում: Հայ բուրժուազիայի հրահանգով սկսած քաղաքացիական պատերազմը չի դադարում՝ մինչև վոր չի հասնում կարմիր զորաբանակը:

Ավելորդ կլիներ այստեղ պատմել այդ կռիւն առանձին զրվագները: Ականատեսները ասում են, վոր պատերազմի ընթացքում վորոշող դերը կատարել են հայ հեղափոխական գյուղացիութիւնը և զինվորական մասսաները: Դրանք են իրենց ուսի վրա տարել վողջ քաղաքացիական կռիւ ծանրութիւնը և դրանք են վճռական հարվածը հասցրել հայ հակահեղափոխութեանը: Վճռական այդ հարվածից հետո ևս դաշնակցութիւնը չի խրատվում: Իր կազմակեր-

պությունը և բանակները նա փոխադրում է Չանդե-
զուր: Այդտեղից նա սկսում է վերջին այն արշավը,
վորը նույնպես վերջանում է կատարյալ պարտու-
թյամբ:

Արդեն ընդհանուր և չափազանց թուուցիկ այդ
տեսությունից պարզորոշ կերպով գծվում է քաղաքա-
ցիական պատերազմի պերմանենտ ~~ըն-~~
թացքը և սուր բնույթը Հայաստանում:

Այդպիսի բան մենք չենք տեսնում վոչ Վրաստա-
նում, և վոչ ել նույնիսկ արդյունաբերական Ադրբեյ-
ջանում:

Իրա համար ել քաղաքացիական կռիւ պատմու-
թյունը Հայաստանում մի տեսակ պարադոքսի ~~(այսինքն)~~
~~է~~ նմանում: Կովկասի
տնտեսապես ամենահետամնաց յերկիր Հայաստանը,
վորքան ել այդ տարրինակ լինի, գրավել և սուաջ-
նակարգ տեղ նորագույն պատմության մեջ:

Ինչպէս բացատրել այդ յերևույթը, և հնարավոր
է արդյոք մեր այսօրվա փաստերի և տվյալների հի-
ման վրա պատասխանել դրված հարցին:

* * *

Նախ և առաջ կարևոր է ցրել չափազանց ընդ-
հանրացած մի կարծիք:

Տնտեսապես հետամնաց Հայաստանը սովորաբար
համարվում է միապագազ գյուղացիական և կիսանա-
հապետական տնտեսութուն ունեցող մի յերկիր: Իրա
համար ել յենթադրում են, վոր կոմունիստական-հե-
ղափոխական շարժման համար Հայաստանը չի կարող
վորեն հող ունենալ: Ի աշնակցության դիրքը միևնույն

այդ պատճառով համարվել է չափազանց կայուն և
հաստատուն:

Իրապես շեշտված թեզը միանգամայն սխալ է և
անհիմն:

Հայաստանը, ճիշտ է, յեղել է ավելի հետամնաց
տնտեսական տեսակետից, քան Վրաստանը կամ Ադր-
բեյջանը:

Այդ թեզը ճիշտ և: Բայց դրանից չի բղխում
այն, վոր Հայաստանում տիրել է նահապետական
իդիլիան, և բացակայել է հասարակական շերտավո-
րումը: Իհո ավելին ևս: Մեր հասարակութունը Կով-
կասում, շնորհիվ ուրույն պատմա-տնտեսական պայ-
մանների, ավելի շերտավորված է, քան վորևէ ուրիշ
մի հասարակութուն:

Ռուսաշայ բուրժուազիան, ինչպես հայտնի է,
80-ական թվականներից սկսած յեղել է ամենաուժեղ
սոցիալական դասակարգը Անդրկովկասում:

Միևնույնը կարելի է ասել և հայ պրոլետարիա-
տի մասին:

Հայ ժողովուրդը անցյալում առաջագրել է պրոլե-
տարական լայնագույն շարքեր, վորոնք կազմել են
Թագվի ինդուստրյալ բանվորության ամենախոշոր
մասերից մեկը:

Ադրբեյջանի հանրապետության կազմակերպու-
թյունից հետո բանվորության ճնշող մեծամասնու-
թյունը փոխադրվում է Հայաստան և գրավում է մեր
յերկրի անտեսության ամենակարևոր ճյուղերը: Յեթե
մենք քննենք Թագվից և ուսսական արդյունաբերա-
կան մյուս վայրերից յեկամ հայ պրոլետարների և
ժողովրդի մյուս խավերի թվական փոխհարաբերու-

թյունը, կհամոզվենք, վոր սոցիալական մյուս խավերի կողքին հայ պրոլետարիատը գրավում է կարևոր տեղերից մեկը:

Ավելի ևս նշանակալից է մեր կյանքում հարգյուղատնտեսական պրոլետարիատի և չքավոր գյուղացիության գերը:

Հողի պակասությունը Հայաստանում, ինչպես հայասնի է, նոր յերևույթ չէ: Անցյալում ևս քննվել է այդ խնդիրը:

Կովկասյան ագրարային (հողային) հարաբերությունների տեսարանների կողմից շեշտվել են մի այլընտրանքային—հայ վաշխառվական-կուլակային տնտեսության կազմակերպումն և և գյուղի աստիճանական պրոլետարացումը: Մանրամասն կանգնել է սոցիալ-տնտեսական այդ պրոցեսի քննության վրա Սիմ. Զավարյանը իր «Յերեվան նահանգի յեվ Կարսի քոչանի գյուղատնտեսական տեսություն» գրվածքի մեջ:

Սիմ. Զավարյանը շեշտել է, վոր հայ գյուղացիության շերտավորումը որեցոր ուժեղանալով անհրաժեշտաբար բազմացնում է հայ չքավոր գյուղացիության բանակը: Ս. Զավարյանը, վորպես իսկուքայալիստ, կանգնած էր այն տեսակետի վրա, վոր վոչ մի միջոց և վոչ մի արվեստական քաղաքականություն չի կարող խափանել բնաանհրաժեշտ պրոցեսսը:

Իր գրքում նա թվական մանրամասն տեղեկություններ է հաղորդել, ի մեջի այլոց Նոր-Բայազետի և Դարալագյոզի գավառների մասին:

Հետագայում Ղարաբաղի սովի առիթով, միևնույն Ս. Զավարյանը առանձին ուսումնասիրություն մեջ քննելով Ղարաբաղի սովը, դարձյալ արել է նմա-

նորինակ յիզրակացություններ: Այդ ավելի թուղիկ տեսություն մեջ ևս նա արձանագրել է հայ գյուղացիության շերտավորման պրոցեսսը:

Մենք չենք կանգնում հայ պարբերական հանդեսներում լույս տեսած ուրիշ տեսությունների վրա:

Իրաավորությունը կանգնում յինք Սիմ. Զավարյանի դիտողությունների վրա, վորովհետև գրանք վերաբերվում յին 90-ական թվականներին և հիմնված են մանրակրկիտ և առարկայական հետազոտության վրա:

Պետք է ասել, վոր գյուղական հասարակության շերտավորման պրոցեսսը յիզել է այնքան ակներև փաստ, վոր արձանագրվել է նույնիսկ մեր գեղարվեստական գրականության մեջ:

Մի շարք հայ գեղագետներ Պոռոյանից և Արշակ Ազապյանից սկսած մինչև Ազիզյանը, Շահնազարյանը և Զավախեցին, դուրս են բերել իրենց յերկերում քայքայվող և շերտավորվող գյուղական հասարակության պատկերը: Յեվ այդին դրանց դործերում գրգռվել է շահերի անհաշտ ներհակությունը մեր գյուղերում, հայ գյուղական հարուստների, վաշխառուների և կուլակների անողոք պայքարը չքավոր գյուղացիության հետ:

Գյուղական հասարակության սոցիալական ներհակ տարրերի այդ կոիվը, իհարկե, դասակարգային կոիվ չէր ժամանակակից իժատտով: Իայց այդպես չլինելով, հանդերձ նա կրում էր իր մեջ սոցիալական հակամարտության բոլոր անհրաժեշտ տարրերը և նախապայմաններ ագրարային—դասակարգային շարժումների:

Միապետություն ժամանակ հայ չքավոր գյուղա-

ցիռութիւնը, իհարկե, հնարավորութիւն չունի կովի միջոցով բարվոքել իր վիճակը: Բուրժուա-ավատական հասարակակարգը իր տեղական հիմնարկութիւններով այնքան հաստատուն և ամուր էր, վոր վոչ մի գյուղացի չէր կարող յերազել հեղափոխական ազատամբռութեան կամ բողոքի մասին:

Ահա ինչու Հայաստանի ավելի չքավոր վայրերում դասակարգային շերտավորման և գյուղի քայքայման շնորհիվ ուժեղ գյուղացիական արտագաղթ էր տեղի ունենում դեպի ուրիշ յերկիրներ: Դեռ 90-ական թվականներին Ղարաբաղից և Զանգեզուրից հայ գյուղացիները գաղթում էին Բաքու, սուսական և Անդրկովկասյան քաղաքները: Նոյնպիսի գաղթ սկսվել էր նաև Լուսիա, Գարալազյազի և Նոր-Քայազետի շրջաններէից: Շատ ընտրոշ է այն, վոր Նոր-Քայազետի և Ղարաբի գյուղացիները XX դարի ըսկզբնական տասնամյակում հուլիսիսկ գաղթ էյին կազմակերպել դեպի Ամերիկա:

Իր ժամանակին հայ մշակական հրապարակադիրները բավական մանրամասն նկարագրել են այդ յերևույթը և վորձել են «ազգային-պատրիոտիքական» հորդորներով և ճառերով կասեցնել գաղթականական հոսանքը: Սակայն նրանց ջանքերը ապարդյուն են անցել: Գաղթականների շարժումը տարիների ընթացքում վոչ միայն չի դադարել, այլ և ընդունել է ավելի լայն թափ ու մեծ ծավալ: XX դարի յերկրորդ կիսամյակից սկսած 1914 թվականից՝ շնորհիվ միջազգային պատերազմի և ճանապարհների խանգարման արտագաղթային հոսանքը ընդհատվել է: Սակայն գյուղի տնտեսական շերտավորումը և գյուղա-

կան մանր տնտեսութեան քայքայումը դրանովիհարկե չի խանգարվել: Պատերազմը իր բոլոր հետևանքներով միմիայն ավելի ծանրացրել է մանր և չքավոր գյուղացիութեան դրութիւնը, ավելի ևս բաղմայրել է գյուղական պրոլետարների քանակը: Յեթե նկատի առնենք այն, վոր 1914-ից սկսած մինչև 1920 թիվը գրեթե Հայաստանը պահել է հսկայական մի գորք և կերակրել է պետական ծառայողների լայնազույն զանգվածներ, յեթե նկատի առնենք այն, վոր այդ զորքը կազմվել է գրեթե բացառապես չքավոր գյուղացիներից, պատկերը մեզ համար պարզ կլինի: Պատերազմի և պետութեան վողջ ծանրութիւնը ընկնում է փոստորեն հայ չքավոր գյուղացիութեան ուսերին: Գյուղական կուլակները, քաղաքներում կուտակված հայ վաշխառու բուրժուազիտներին չաճ յերբեք չեն մոռացել... Պատերազմից և ուղմական դանազան «փոքրութեներից» միայն ողտվել են: Զանազան անարգար միջոցներով նրանք խուսափել են կատարել քաղաքացիական իրենց պարտականութիւնները: Իսկ նրանք, վորոնք մասնակցել են վորեկ կերպ պատերազմին, շնորհիվ իրենց հարստութեան միշտ հնարավորութիւն են ունեցել վորեկ կառավարիչ կամ ծառայող թողնել իրենց կալվածներում կամ այգիներում: Այդպիսով պատերազմը վոչ մի վնաս չի հասցրել խոշոր գյուղական տրնտեսութեանը: Յե՛վ ընդհակառակը՝ վերջնականապես քայքայել և պրոլետարացրել է չքավոր և մանր գյուղական տնտեսութիւնը ունեցող շինականներին:

Ինչ վերաբերում է դաշնակցական կառավարութեան—դա իր յերեքամյա գործունեութեան ըն-

Թացքում յիբեք հոգ չի տարել անապահով այդ գյուղացիութեան անտեսութեան մասին, և չի մշակել վորևէ նպաստավոր սոցիալական որեւորութիւն չըքավորութեան համար: Այդպիսով Հայաստանում պատերազմի և դաշնակցական կառավարութեան քաղաքականութեան շնորհիւ Բազմից և արդյունաբերական մյուս վայրերից յեկած պրոլետարների կողքին կանգնել են չքավոր գյուղացիութեան հոծ մասսաները:

Չունենորների և անբավականների ահագին այդ բանակը ամեն որ տեսնում և պատերազմի մասին ճառող կուլակ-վաշխառուներին, Բազմի նավթահորերի նախկին տերերին և կառավարիչներին, Չախտաշաններին, Դաստակյաններին, Գյուլխանդանյանին, և Վարշամյանին... Ամեն որ նա զգում է, վոր իր ընտանիքի կացութիւնը գյուղում ավելի ևս ծանրանում է, վոր պարտատերի պահանջները ավելի ևս անողոք են դառնում, իսկ ապագան նույնքան անհուսատու է և մութ:

Այդ պահուն հանկարծ լսում և նա, վոր այնտեղից, հյուսիսից գալիս են ոուս մութիկ-կարմիր զինվորները, նրանք, վորոնք տապալել են իրենց գնեւորաչներին և կալվածատերերին, նրանք, վորոնք գնդակահարել են ցար Նիկոլային, պատժել են կուլակ-վաշխառուներին, զսպել են բուրժուաներին և գալիս են հաստատելու բանվորա-գյուղացիական կառավարութիւն: Ու զգում և հայ ոանչպարը, վոր արդեն հասել է սոցիալական վրեժի ժամը, հասել է այն վայրկյանը, յերբ ինքը միացած հյուսիսային յեղբայրների հետ կարող է լուծել հին վեճը «միխտանչիներ» և «կարտուզավոր» սովորաբայրների հետ, կարող

է ազատվել կարալային պարտքերից և վերաշինել իր անտեսութիւնը...

Այդ բոլորին պիտի ավելացնել նաև այն, վոր Գարմիր Բանակի ներմուտքը քննում էր, վորպես պատերազմի նախավախճանը և խաղաղ համայնակենցաղի այնքան ցանկալի վերահաստատութիւնը:

Հայ գյուղացի—զինվորի համար այդ վերջին կետը առանձնապես թանգազին էր: Այսպես կոչված «ուսուական որեւորացիան» վոչ այլ ինչ էր, յեթէ վոչ խաղաղասիրական տրամադրութեան արտահայտութիւնը:

Այդ գիտեր հայ բուրժուազիան: Այդ շատ լավ գիտեր դաշնակցութիւնը:

Դրա համար էլ նա մինչև վերջ կոպում էր խորհրդային իշխանութեան դեմ և ամեն առիթից ոգաբովում էր սրելու Հայաստանի և Տաճկաստանի հարաբերութիւնները, մղելու հայ աշխատավորներին դեպի նոր պատերազմներ և կռիւներ:

Հայ աշխատավորութեան ապստամբութիւնները և կռիվը ընդդեմ դաշնակցական կառավարութեան անհրաժեշտաբար բղխում էյին նրա դրութիւնից: Հայաստանի չքավոր, կիսապրոլետար և պրոլետար գյուղացիութեան համար պարզ էր, վոր դաշնակցական կառավարութեան սետտավրացիան նշանակում է նոր պատերազմ, նոր կռիւներ, կուլակ և բուրժուա տարբերի տիրակալութիւն և աշխատավորների վերջնական մահացում... Մյուս կողմից հայ բուրժուազիան և բուրժուազիայի կազմակերպութիւնները գիտեին, վոր Հայաստանը միակ այն հենարանն է, վորը կարող է նպաստել միջազգային իմպերիալիզմին արշավելու դե-

105

12

3168

14

պի Անդրկոսիկոս: Հայաստանը, Կովկասյան հակահեղափոխութեան վերջին այդ հենարանը կորցնելուց հետո՝ հայ բուրժուազիան պիտի կորցնէր իր վերջին հույսը՝ յերբեմնից հեռու բերել Թիֆլիսը և Քաղուն, վերահաստատելու իր հին տիրակալութիւնը այնքան յերանաժեռ նավթային վայրերում:

Յեւ վաղնակցութիւնը՝ կովկասահայ բուրժուազիայի սաղմական այդ կազմակերպութիւնը, վարը իր հրահանգները ստանում եր Փարիզից, Ահաբանյանից, Մանթաշյանից, Գաստալիովից և Բագվի խորը ու մանր նավթ-արդւունարեւոյններից, իր բոլոր ջանքերը թափել եր, վորպեսզի միջազգային ինտերալիզմը կարողանա Հայաստանի միջոցով մտնել Կովկաս և վերադարձնել հայ սնանկացած բուրժուազիային իր հանրերն ու շենքերը:

Քաղաքացիական կռիվը Հայաստանում այդպիսով միանգամայն կազմ ու պատրաստ սոցիալական յերկու ներհակ խմբերի պատերազմ եր, վորոնցից մեկը կապված եր խորհրդային Ռուսիայի, իսկ մյուսը իմպերալիստական Անտանտի հետ:



2017

